

2006 թվականի արտակարգ դեպքերի վիճակագրություն

2006 թվականին Հայաստանում գրանցվել է արտակարգ իրավիճակի 7126 դեպք (2005 թ. 4479), որոնց հետեւանքով զոհվել է 483 (2005-ին՝ 440) եւ տուժել 4563 (2005-ին՝ 3132) մարդ:

Տեխնաժին արտակարգ իրավիճակի 4566 դեպքի հետեւանքով զոհվել է 379, տուժել 2186 մարդ (2005 թ.՝ 2978 դեպք, 341 զոհ եւ 1841 տուժած): Դեպքերի ու զոհերի աճը մեծապէս պայմանավորված է ճանապարհատրանսպորտային պատահարների աճով:

Գրանցվել է տարերային արտակարգ իրավիճակի 247 դեպք, որոնց հետեւանքով զոհվել է 3 եւ տուժել 2 մարդ (2005 թ. համապատասխանաբար՝ 251, 2 եւ 2):

Սոցիալ-կենցաղային արտակարգ իրավիճակների 2313 դեպքի հետեւանքով զոհվել է 101 եւ տուժել 2375 մարդ (2005 թ.՝ 1250, 97, 1289):

ՀՓԾ ստորաբաժանումներն արձագանքել են արտակարգ իրավիճակի 2169 դեպքի: